

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԳԱՆՁՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Երևան-2024թ.**

Սույն մեթոդական ուղեցույցը կազմվել և մշակվել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակում՝ փորձագետներ Վահագն Պետրոսյանի և Լիլիա Յուլյանի կողմից՝ ՄՀԸ խորհրդատու Գայանե Նալբանդյանի համակարգմամբ:

Ծրագիրն իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ՄՀԸ) կողմից, Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարություն պատվերով և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ:

Սույն մեթոդական ուղեցույցում առկա տեսակետներն ու եզրակացություններն անպայմանորեն չեն արտացոլում ՄՀԸ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները: Բովանդակության համար պատասխանատվությունը լիովին կրում են հեղինակները:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Հապավումների ցանկ.....	4
2. Ընդհանուր դրույթներ.....	5
3. Տեղական հարկերի հավաքագրման հարկային վարչարարությունը.....	6
4. Տեղական հարկերի գծով պարտավորությունների հարկադիր կատարման հետ կապված գործընթացները.....	12
5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	25

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>Օրենսգիրք</b>	ՀՀ հարկային օրենսգիրք
<b>ՏԻՄ-եր</b>	Տեղական ինքնակառավարման մարմիններ
<b>ՏԻԵԽ</b>	Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
<b>ՏԿԵՆ</b>	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
<b>ՖՆ</b>	ՀՀ ֆինանսների նախարարություն
<b>ՊԵԿ</b>	Պետական եկամուտների կոմիտե
<b>Ուղեցույց</b>	«Համայնքների ՏԻՄ-երի կողմից տեղական հարկերի հետ կապված դրամական պարտավորությունների հարկադիր գանձումն ապահովող աշխատանքների կազմակերպման» մեթոդական ուղեցույց
<b>Քաղ.օր.</b>	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
<b>Քաղ.դատ.օր.</b>	ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
<b>ՎԻՎ.օր.</b>	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
<b>ՎԴՕ</b>	ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք
<b>ԴԱՀԿ</b>	Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Մեթոդական ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) կազմվել և մշակվել է հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք), «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքների, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան կարգավորումները:

Ուղեցույցում ներկայացված են անշարժ գույքի հարկի գծով պարտավորությունների կատարման ժամկետները, տույժերի և տուգանքների հաշվարկումը, ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշման բովանդակությունը, որոշման պատշաճ ծանուցման ընթացակարգերը, պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու որոշման բովանդակությունը և ժամկետները, արգելանք դնելու մասին որոշումը հարկադիր կատարման ուղարկելու իրավական կարգավորումները, ժամանակացույցի միջոցով պարտավորությունը մարելու կարգավորումները, չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշումը հարկադիր կատարման ուղարկելու ընթացակարգը, վարչական ակտերի բողոքարկման իրավունքը, դրանց ժամկետները, անբողոքարկելի վարչական ակտի հիմքով՝ դրամական պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովող գործընթացի նկարագրությունը և այլն:

Ուղեցույցի բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածներում ներկայացված են հետևյալ փաստաթղթերի (վարչական ակտերի) օրինակելի ձևերը.

1. Անշարժ գույքի հարկի մասով՝ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում գոյացած հարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով համայնքի աշխատակազմի կողմից պարտավոր անձին ներկայացվելիք ծանուցագիրը:
2. Անշարժ գույքի հարկի մասով՝ հարկային պարտավորությունները չկատարելու հիմքով՝ համայնքի աշխատակազմի կողմից հարուցված անշարժ գույքի հարկի գումարի գանձման վարչական վարույթի արձանագրությունը:
3. Անշարժ գույքի հարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին համայնքի ղեկավարի որոշման նախագիծը և այդ վարչական ակտն ընդունելու անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումը:
4. Անշարժ գույքի հարկի գումարի գանձման պահանջով վարչական վարույթը կարճելու մասին համայնքի ղեկավարի որոշման նախագիծը:

Մեթոդական ուղեցույցը կրում է խորհրդատվական բնույթ, այն տրամադրվում է լիազոր մարմնի կողմից համայնքների ղեկավարներին՝ ի ղեկավարումն:

## 2. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպում է **տեղական հարկերի**, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների **գանձումն ու վերահսկումը**: Այս կարգավորումից ակնհայտ է, որ տեղական հարկերի հավաքագրման հետ կապված վարչարարությունը իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից, ի դեմս համայնքի աշխատակազմի: Միաժամանակ, պարզ է դառնում, որ համայնքի ղեկավարի վրա դրված է վարչարարության իրականացումը տեղական հարկերի մասով, ներառյալ վերջին փուլը՝ վերահսկումը:

Տեղական հարկերի հավաքագրման և դրանից բխող վարչարարության իրականացման իմաստով, առաջարկվում է համայնքի ՏԻՄ-երին և համայնքի աշխատակազմին, առանձնահատուկ ուշադրություն դարձնել Հարկային օրենսգրքի կարգավորումները: Անշարժ գույքի հարկի մասով, ուշագրավ է օրենսգրքի 226-րդ հոդվածը, որով սահմանվում են լիազոր մարմինները, համաձայն այդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, անշարժ գույքի հարկի մասով հաշվառող մարմիններն են՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք՝

- իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,
- իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Հարկային օրենսգրքի 226-րդ հոդվածի վերլուծության համատեքստում, առաջարկվում է ՏԻՄ-երը, ի դեմս համայնքի ղեկավարին, համայնքի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման միջոցով, իրականացնել անշարժ գույքի հարկի մասով հաշվառումը, վճարումների ընդունումը կամ գանձումը, ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը, վճարման նկատմամբ հսկողությունը և հարկային վարչարարությունը: Նշված գործողությունները իրականացնելիս, առաջարկվում է հիմք ընդունել (առաջնորդվել) Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1288-Ն որոշմամբ, որով հաստատվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի ու փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման կարգը:

Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1288-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանվում են Հարկային օրենսգրքով սահմանված անշարժ

գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների և անշարժ գույքի հարկի ու փոխադրամիջոցների գույքահարկի՝ ՏԻՄ-երի կողմից հաշվառման հետ կապված հարաբերությունները: Հաշվառող մարմինները, այսինքն՝ ՏԻՄ-երը, հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի ու փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումն պետք է իրականացնեն իրենց կողմից վարվող՝ անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով: Հաշվառող մարմինները հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի ու փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը կարող են իրականացնել նաև թղթային եղանակով՝ Կառավարության նշված որոշմամբ սահմանված կարգի պահանջների պահպանմամբ:

Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումների համատեքստում, առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին, հիմք ընդունել անշարժ գույքի կադաստր վարող մարմնից ստացված տեղեկությունները, որի հիման վրա հաշվարկել անշարժ գույքի հարկ վճարողների անշարժ գույքի հարկի գումարները, և հաշվարկված անշարժ գույքի հարկի գումարների վերաբերյալ տեղեկությունները մինչև ընթացիկ հարկային տարվա նոյեմբերի 1-ը փակցնել համայնքի վարչական շենքի տեսանելի տեղում և (կամ) տեղադրել համայնքի պաշտոնական կայքերում: Վերը մեջբերված ժամկետում, անհրաժեշտ է անշարժ գույքի հարկ վճարողներին ներկայացնել անշարժ գույքի հարկի վճարման ծանուցագրեր (այդ թվում՝ ուղարկել փոստով կամ հանձնել առձեռն):

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին, ընդունել ի գիտություն՝ համայնքի աշխատակազմի կողմից, մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը անշարժ գույքի հարկի մասով հաշվարկված գումարների վերաբերյալ տեղեկություն չփակցնելը կամ անձանց ծանուցագիր չներկայացնելը անշարժ գույքի հարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

Անհրաժեշտ է արձանագրել, որ համայնքի վարչական սահմաններում անշարժ գույք ունեցող անձինք, իրավունք ունեն դիմելու համայնքի աշխատակազմ, անշարժ գույքի հարկի գծով իրենց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու նպատակով: Նման դեպքերում, հաշվառող մարմինները, տվյալ դեպքում՝ համայնքի աշխատակազմը, նշված տեղեկանքները կամ տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Վերը նկարագրված հարաբերություններում, առաջարկվում է առաջնորդվել Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասի կարգավորումներով:

Ինչ վերաբերում է փոխադրամիջոցների գույքահարկին, ապա այս հարկի մասով, ՏԻՄ-երը անշարժ գույքի հարկի նախադեպով համարվում են հաշվառող մարմիններ, որոնք իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով, իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը: Անհրաժեշտ է ընդունել ի գիտություն, որ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման կարգը ևս սահմանվում է Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1288-Ն որոշմամբ:

Փոխադրամիջոցների գույքահարկի մասով, համայնքի ղեկավարը և համայնքի աշխատակազմը, իրականացնում են հարկի հավաքագրումը, ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը, վճարման հսկողությունն ու հարկային վարչարարությունը: Հարկային օրենսգրքի 248-րդ հոդվածի կարգավորումների լույսի ներքո, ՏԻՄ-երը, հիմք ընդունելով շարժական գույքի կադաստր վարող մարմնից ստացված տեղեկությունները, հաշվարկում են փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների փոխադրամիջոցների գույքահարկի գումարները և մինչև ընթացիկ հարկային տարվա նոյեմբերի 1-ը փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներին ներկայացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարման ծանուցագրեր (այդ թվում՝ ուղարկում են փոստով կամ հանձնում են առձեռն):

Անհրաժեշտ է արձանագրել, որ վերը նշված ժամկետում ծանուցագիր չներկայացնելը փոխադրամիջոցի գույքահարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից: Փոխադրամիջոցի գույքահարկ վճարողները փոխադրամիջոցի գույքահարկի գծով իրենց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու նպատակով կարող են դիմել համայնքի աշխատակազմ: Համայնքի աշխատակազմը նշված տեղեկանքները կամ տեղեկությունները տրամադրում է դիմումները ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին, փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային վարչարարության իրականացման գործընթացում, հիմք ընդունել Հարկային օրենսգրքի 248-րդ հոդվածի կարգավորումները:

Տեղական հարկերի մասով ՏԻՄ-երի կողմից իրականացվող վարչարարությունը կարևորագույն իրավական գործընթաց է, որի մասով, հատկանշական է Հարկային օրենսգրքով սահմանված հասկացությունը և այն բոլոր սկզբունքները, որոնք պետք է պահպանվեն հարկային վարչարարության



իրականացման գործընթացներում: Այս իմաստով, առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի կարգավորումների համատեքստում, տեղական հարկերի գծով հարկային վարչարարությունը, ՏԻՄ-երի՝ Հարկային օրենսգրքի և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողությունների ամբողջություն է, որն ուղղված է հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համատարած և ճիշտ կիրառության ապահովմանը:

Տեղական հարկերի և առհասարակ հարկերի մասով վարչարարության իրականացման շրջանակում, առաջարկվում է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով, որոնց պահպանումը ՏԻՄ-երի կողմից ունի էական և կարևոր նշանակություն: Այդ սկզբունքներն են՝

- **խտրականության բացակայություն՝** հարկերի կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.
- **թափանցիկություն և հաշվետվողականություն՝** հարկային վարչարարությունը պետք է լինի թափանցիկ, հրապարակային:

Վերադառնալով տեղական հարկերի մասով իրականացվող հարկային վարչարարությանը, պետք է արձանագրել, որ այդ վարչարարությունը իրականացվում է Հարկային օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի համապատասխան կարգավորումների հիման վրա: Հարկ է նկատել, որ ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը համարվում են վարչական մարմիններ<sup>1</sup>: Վարչական մարմիններին է վերապահված վարչարարություն իրականացնելու իրավասությունը: Այս իմաստով, կարևոր է հասկանալ վարչարարության հասկացությունն ու նպատակը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածի, վարչարարությունը՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործությունն է, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վարչարարության հիմնական բնութագրիչը, ըստ էության համարվում է վարչական մարմնի, տվյալ դեպքում՝ ՏԻՄ-ի արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը: Տեղական հարկերի մասով հարկային վարչարարությունը

---

<sup>1</sup> Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդված:

դիտարկելիս, այդ արտաքին ներգործությունը իրականացվում է անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ վճարող սուբյեկտների նկատմամբ՝ համայնքի ղեկավարի կողմից: Համայնքի ղեկավարի, որպես վարչական մարմնի անունից, հարկային վարչարարության իրականացնող կողմը հանդիսանում է համայնքի աշխատակազմը և դա միանգամայն տրամաբանական է, հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի այն կարգավորումը, համաձայն որի, համայնքի աշխատակազմը ապահովում է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի գործունեության կազմակերպումը:

Վարչարարության գործընթացի մյուս կարևոր բաղադրիչը, թերևս համարվում է վարչական կամ նորմատիվ ակտի ընդունումը: Անշուշտ, վարչարարության և վարչական վարույթի ինստիտուտի տեսանկյունից, վարչական ակտն ընդունվում է վարույթի վերջին, կամ որ նույնն է՝ եզրափակիչ փուլում: Հարկային վարչարարության համատեքստում, ՏԻՄ-ի կողմից վարչական ակտն ընդունվում է այն պարագայում, երբ վարչական վարույթն հարուցվել է հաշվառող մարմնի՝ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ, այն սուբյեկտի նկատմամբ, որն ունի տեղական հարկերի գծով որոշակի ժամկետանց պարտավորություններ:

Վարչական ակտի ընդունումը համարվում է վարչական վարույթի վերջին փուլը, որից հետո սակայն, հարկային վարչարարությունը շարունակվում է իրականացվել, կապված տեղական հարկի գծով սուբյեկտի կողմից դրսևորված վարքագծի արդյունքներից, ենթադրյալ հարկային իրավախախտման բովանդակությունից և հետևանքներից: Հարկային վարչարարության գործընթացը ներառում է նաև հսկողությունը, իր պատասխանատվություն ենթադրող գործիքակազմերի կիրառմամբ, ընդհուպ նաև հարկադիր կատարման վարույթը, որը ևս կիրառելի է Հարկային օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի կարգավորումների տեսանկյունից:

Որպես եզրահանգում, կարելի է արձանագրել, որ տեղական հարկերի մասով կիրառվող հարկային վարչարարությունը, ՏԻՄ-ի կողմից իրականացվող ամբողջական իրավական գործընթաց է, որի իրականացման մասով պետությունը սահմանել է համապատասխան վարքագծի կանոններ և նորմեր՝ Հարկային օրենսդրության և վարչարարության օրենսդրության կարգավորումների շրջանակներում: Հարկային վարչարարության սկզբնական փուլը կարելի է համարել տեղական հարկ վճարողի հաշվառման գործընթացը, միջանկյալ փուլը՝ տեղական հարկերի պարտավորությունների սահմանման, հարկ վճարող սուբյեկտներին տեղեկացման, ծանուցումների ներկայացման գործընթացն է: Ինչ վերաբերում է հարկային վարչարարության եզրափակիչ փուլին, ապա այն ավելի ընդգրկում է իր բովանդակությամբ և գործողությունների հաջորդականությամբ: Հարկային

վարչարարության յուրաքանչյուր փուլ ունի իր կարևորությունը, առավելապես այդ կարևորությունը արժանահավատ է դիտարկել հարկ վճարող սուբյեկտի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից, ինչպես նաև ՏԻՄ-երի և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների՝ սուբսիդարության սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Հարկային վարչարարության վերջնական փուլում կարող են նախանշվել մի քանի գործողություններ, դրանք են՝ վարչական ակտի կայացումը ՏԻՄ-ի կողմից, ժամկետանց պարտավորությունների հաշվարկում և այդ կապակցությամբ ՏԻՄ-ի կողմից համապատասխան վարչական ակտի ընդունում, օրենքով սահմանված կարգով՝ անբողոքարկելի վարչական ակտի հիմքով հարկադիր կատարման վարույթի նախաձեռնում և դատական կարգով բողոքարկում: Նշվածներից վերջինը, դատական կարգով բողոքարկումը, դուրս է վարչարարության շրջանակից, սակայն այն կարող է կամ պետք է բխի իրականացված հարկային վարչարարությունից:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին ընդունել ի գիտություն, Հայաստանում 2017 թվականի կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնք իրականացվել էին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքներում, որոնցով սահմանվեցին անբողոքարկելի վարչական ակտերի բնորոշման նոր սահմանումներ և առանձնահատկություններ:

### **3. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ**

ՏԻՄ-երի՝ ֆինանսների և հարկերի բնագավառում լիազորությունները, հիմնականում սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներով և Հարկային օրենսգրքով: Ինչ վերաբերում է տեղական հարկերի գծով պարտավորությունների հարկադիր կատարման հետ կապված իրավահարաբերություններին, ապա դրանք հիմնականում սահմանվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքներով:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին ընդունել ի ղեկավարումն հետևյալ ցուցումը՝ ՏԻՄ-ի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմինն վերապահված հայեցողական լիազորությունը<sup>2</sup>: Օրենսդրական մեջբերված կարգավորումը ըստ էության, ամբողջ ծավալով տարածվում է տեղական հարկերի գծով պարտավորությունների կատարումն ապահովող՝ համայնքի կողմից նախաձեռնված իրավահարաբերությունների վրա: Այս եզրահանգումը առավել քան ամրապնդվում է այն համատեքստում, որ ՏԻՄ-երը նախ համարվում են վարչական մարմիններ, երկրորդը՝ տեղական հարկերի հավաքագրման և դրա հետ կապված հսկողության լիազորությունները օրենքով վերապահված են ՏԻՄ-երին, երրորդը՝ տեղական հարկերի, այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների գանձման պահանջը սահմանված է օրենքով, հետևաբար, ՏԻՄ-ը ոչ թե իր հայեցողությամբ, այլ օրենքի պահանջը կատարելու նկատառումներից ելնելով, պետք է հարուցի վարչական վարույթ:

ՏԻՄ-ի կողմից տեղական հարկերի հավաքագրումն ապահովելու նպատակով նախաձեռնված վարչական վարույթը, ըստ էության, պետք է ուղեկցվի օրենքով սահմանված երեք փուլերի միջոցով: Առաջին փուլում, ՏԻՄ-ի կողմից նախաձեռնվում է վարչական վարույթը, որի վերաբերյալ վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցումը ուղարկվում է համայնքի աշխատակազմի կողմից: Նշված անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկային, փորձագետին, թարգմանչին և այլ մարմինների ներկայացուցիչներին, վարչական մարմինը ծանուցում է վարույթի

<sup>2</sup> Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդված:

իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Վերոգրյալի համատեքստում, հարկ է ընդունել ի գիտություն, որ ՏԻՄ-ը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Այսինքն, նշված կարգավորումից հետևում է, որ եթե վարչական վարույթը տևում է մինչև 3 օր, ապա ՏԻՄ-ը պարտադիր ծանուցման պարտավորություն չի կրում:

Երկրորդ փուլում, որն ըստ էության համարվում է վարույթի ընթացիկ փուլը, համայնքի աշխատակազմը անհրաժեշտության դեպքում նախաձեռնում և անցկացնում է վարչական վարույթի լսում, հնարավորություն է ընձեռում ժամկետանց պարտավորություններ ունեցող սուբյեկտին, ներգրավելու փաստական հանգամանքներ, ապացույցներ, որոնք կփաստեն իր կողմից հարկային պարտավորությունները կատարելու անհնարինության մասին, կամ արտահայտելու իր դիրքորոշումը վարույթի ընթացիկ փուլում՝ ժամկետանց հարկային պարտավորությունները կատարելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է եզրափակիչ փուլին, որը վարչական վարույթի վերջին փուլն է, ապա այս փուլում, ՏԻՄ-ը, մասնավորապես՝ համայնքի ղեկավարը ընդունում է վարչական ակտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 58-րդ հոդվածի կարգավորումների շրջանակում, համայնքի ղեկավարի կողմից՝ գրավոր վարչական ակտն ընդունված է համարվում այդ ակտը իր կողմից ստորագրվելու օրվանից: Այս իրավական սահմանումը հիմք է հանդիսանում հաշվարկելու օրենքով սահմանված անբողոքարկելի վարչական ակտ դառնալու կամ համարվելու ժամկետը, որի արդյունքում, օրենքով նախատեսված կարգով նախաձեռնվում է անբողոքարկելի վարչական ակտի հիմքով, ժամկետանց հարկային պարտավորությունների հարկադիր գանձման վարույթ:

Համայնքի ղեկավարը, հարկային ժամկետանց պարտավորությունների մասով կայացված վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է վարույթի մասնակցին կամ մասնակիցներին, օրենքով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի լույսի ներքո, համայնքի ղեկավարի կողմից ընդունված գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս

հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով: Ինչ վերաբերում է օրենքով նախատեսված հանձնման մյուս միջոցներին, ապա դրանք կիրառվում են այն դեպքում, երբ որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ:

Համայնքի ղեկավարը, գրավոր վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելիս պարտավոր է դրա հետ միասին հանձնել նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը: Նշված փաստաթղթերը վարչական ակտի հետ միաժամանակ չհանձնելը կամ ուշ հանձնելը չի կարող ազդել վարչական ակտի գործողության վրա և այդ պատճառով ակտի իրավաչափությունը վիճարկելու հիմք դառնալ:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որը վերաբերում է համայնքի ղեկավարի կողմից ընդունված գրավոր վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքերին: Նման դեպքերում, օրենքով սահմանված կարգով փոփոխություններ և լրացումներ կատարելիս, այդ փոփոխությունները և լրացումները կատարած համայնքի ղեկավարը, պարտավոր է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով դրանք հանձնել վարչական ակտի հասցեատիրոջը: Վարչական ակտն ընդունած համայնքի ղեկավարը, գրավոր վարչական ակտի հասցեատիրոջ խնդրանքով, նրան կարող է տրամադրել նաև վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով:

Անհրաժեշտ է փաստել, որ իրավաբանական ուժ ունի միայն վարչական ակտի վարչական վարույթի իրականացման լեզվով ընդունված տեքստը: Օտար լեզվով թարգմանված պատճենը չի կարող հիմք լինել այդ ակտի իմաստը կամ բովանդակությունը մեկնաբանելու կամ պարզաբանելու համար, իսկ վեճ առաջանալու կամ բողոք ներկայացնելու դեպքում հիմք է ընդունվում վարչական ակտի հայերենով ընդունված տեքստը: Համայնքի ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտի հրապարակումը կատարվում է համայնքի պաշտոնական կայք էջում, կամ այլ պաշտոնական տեղեկագրում հրատարակելով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի ղեկավարներին, ընդունել ի գիտություն հետևյալը. Հարկային

ժամկետանց պարտավորությունների մասով, համայնքի ղեկավարի կողմից կայացված կամ ընդունված գրավոր վարչական ակտը ենթակա է պարտադիր հրապարակման, եթե համայնքի աշխատակազմին հայտնի չեն այդ ակտով ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում: Գրավոր վարչական ակտը կարող է հրապարակվել նաև համայնքի աշխատակազմի նախաձեռնությամբ, եթե ակտի հրապարակումը համայնքի ղեկավարը համարում է առավել նպատակահարմար՝ համայնքի և հանրության շահերի, ինչպես նաև անձանց իրավունքների արդյունավետ պահպանման անհրաժեշտությունից ելնելով:

Հարկային ժամկետանց պարտավորությունների չկատարման հիմքով, համայնքի ղեկավարի կողմից կայացված վարչական ակտը, անձը իրավունք ունի բողոքարկելու: Տեղական հարկի ժամկետանց պարտավորությունների դեպքով կայացված ակտի բողոքարկումը, իրականացվում է վարչական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված կարգով: Անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը<sup>3</sup>:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝ ՏԻՄ-ին:

Եթե ակտը բողոքարկվել է ակտն ընդունած վարչական մարմին, ապա բողոքը ենթակա է քննարկման բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի կողմից, տվյալ դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից: Ինչ վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տեղական հարկերի մասով ժամկետանց պարտավորությունների գանձման նպատակով համայնքի ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտի միաժամանակյա բողոքարկմանը, այսինքն, թե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում համայնքի աշխատակազմում հարուցված վարույթը կարճվում է:

Տեղական հարկերի մասով պարտավորությունները չկատարելը, ՎԻՎ.օր.-ի կարգավորման տեսանկյունից համարվում է վարչական իրավախախտում: Վարչական իրավախախտումների որոշակի տեսակներով, վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկելը հնարավոր չէ, օրինակ՝ ՏԻՄ-ը չունի վերադաս, հետևաբար վերադասության կարգով բողոքարկման ինստիտուտը չի գործում այս հարաբերությունների համատեքստում:

---

<sup>3</sup> Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 69-րդ հոդված:

Վերադասության կարգով բողոքարկումից հետո դատարան դիմելու հնարավորություն սահմանելը հարկ է դիտարկել օրենսդրի նպատակի տեսանկյունից: Ըստ այդմ, օրենսդիրը նպատակ է հետապնդել, հաշվի առնելով նման իրավախախտումների վերաբերյալ գործերի մեծ քանակը, բեռնաթափել դատարանները, ակնկալելով, որ այդ վարչական գործերով բողոքների մի մասն իր լուծումը կգտնի վերադասության կարգով վարչական ակտի բողոքարկման արդյունքում:

Սակայն միաժամանակ օրենսդիրը որևէ սահմանափակում չի նախատեսել՝ անձի դատարան դիմելու իրավունքը պայմանավորելով վարչական վերադաս մարմնի կայացրած որոշման տեսակով, և դա տրամաբանական է, քանի որ նշված իրավակարգավորման հակառակ մեկնաբանության պարագայում վարչական վերադաս մարմինը իր կայացրած որոշմամբ կարող է կանխորոշել այն հարցը, թե արդյոք անձն իր խախտված իրավունքի պաշտպանության հայցով դատարան կարող է դիմել, թե ոչ: Այսպես, օրինակ, եթե անձը վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկել է, սակայն վերադաս վարչական մարմինն անձի բողոքը անհիմն կերպով թողել է առանց քննության, նման մեկնաբանության պարագայում կստացվի, որ անձը վարչական վերադաս մարմնի սխալի պատճառով զրկվում է դատարանի մատչելիությունից: Ակնհայտ է, որ օրենսդիրը նման նպատակ չի հետապնդել, քանի որ դատարանի մատչելիության անձի իրավունքը, ինչպես նաև իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունը սահմանված և երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով: Որոշակի գործերով վեճերի լուծման արտադատական կարգ սահմանելը չի կարող մեկնաբանվել խիստ ձևականորեն և խոչընդոտել անձին հասնելու իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը<sup>4</sup>:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային թիվ ՎԴ/7580/05/21 որոշմամբ արտահայտված իրավական գնահատականի շրջանակում, արժանահավատ է դիտարկել այն հանգամանքը, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական ակտն ընդունող մարմինը, չունի վերադաս վարչական մարմին, ապա վարչական վերադասության կարգով բողոքարկումը ուղղակի դառնում է անհնարին, կամ սուբյեկտի համար, այդ իրավական հնարավորությունը պարզապես բացակայում է: Դիցուկ, անշարժ գույքի հարկի մասով համայնքի ղեկավարի կողմից կայացված վարչական ակտը, հնարավոր չէ բողոքարկել վարչական վերադասության կարգով, այս պարագայում գործում է պարզապես վարչական կարգով բողոքարկման մեթոդը:

Նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն օրենքով սահմանված մյուս վարչական մարմինների, ՏԻՄ-երը չունեն

<sup>4</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7580/05/21 վարչական գործով կայացրած նախադեպային որոշումը: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167724>



վերադաս մարմիններ, այսինքն, այս մարմինները, լինելով ընտրովի ինքնակառավարվող մարմիններ, որևէ այլ մարմնի ենթակա չեն համարվում: Այս պարագայում, վարչական իրավունքի գիտության խնդիրն է լուծելու ՏԻՄ-երի կողմից ընդունված վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման գործիքակազմերի լիարժեք սահմանման և իրացման հարցը: Տեղական հարկերի գծով ՏԻՄ-երի կողմից կայացված ակտերի արտադատական կարգով բողոքարկումը սկսվում և սպառվում է բացառապես վարչական կարգով բողոքարկման գործիքակազմի կիրառմամբ: Վարչական կարգով բողոքարկումը ենթադրում է, որ հարկային ժամկետանց պարտավորություն ունեցող սուբյեկտը, ում նկատմամբ, համայնքի ղեկավարի կողմից կայացվել է համապատասխան վարչական ակտ, իրավունք ունի այն բողոքարկելու հենց համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավարի կողմից՝ տեղական հարկի ժամկետանց պարտավորությունների չկատարման հիմքով կայացված վարչական ակտի դեմ, վարչական բողոքը կարող է բերվել

- վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում.
- վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում.
- գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում<sup>5</sup>:

Վերը մեջբերված իրավանորմում, ուշադրության է արժանի 2 ամսյա բողոքարկման ժամկետը, որի պարագայում, հարց է առաջանում, իսկ եթե լրացել է այդ ժամկետը, որն է սուբյեկտի կամ ՏԻՄ-ի հնարավոր հաջորդ գործողությունը: Այս հարցի պատասխանը նախատեսված է օրենքում, որով այդ ժամկետը բաց թողնվելուց և չբողոքարկելուց հետո, վարչական ակտը որակվում է որպես անբողոքարկելի և դառնում հանրային դրամական պահանջներով կարգավորվող իրավահարաբերության առարկա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում, որպես վարչական վարույթի և վարչական բողոք բերելու ինստիտուտների տրամաբանական շարունակություն, նախատեսվել է վարչական ակտի հարկադիր կատարման ինստիտուտը:

Առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ այս դեպքերում վերը նշված օրենքի 78-րդ և հաջորդ հոդվածներով նախատեսվում է վարչական ակտի հարկադիր կատարման հնարավորություն: Դրանով օրենքի արդյունավետ կատարման

---

<sup>5</sup> Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 71-րդ հոդված:

հնարավորություն է ստեղծվում: Վարչական ակտն ու դրա հարկադիր կատարումը ավտորիտար պետության մնացուկներ չեն: Նրանք ժողովրդավարական ճանապարհով ընդունված օրենքների՝ հավասարության պահանջին համապատասխանող կատարման անհրաժեշտ գործիքներ են, անկախ այն բանից, թե արդյոք այս կամ այն քաղաքացին պատրաստակամ է այդ օրենքները կատարելու, թե ոչ:

ՏԻՄ-երի կողմից ընդունված վարչական ակտերը ենթակա են պարտադիր կատարման վարչական ակտի հասցեատիրոջ կողմից: Եթե վարչական ակտով այլ ժամկետներ սահմանված չեն, ապա վարչական ակտը ենթակա է կատարման՝ ուժի մեջ մտնելու պահից: Քիչ չեն այն դեպքերը, երբ անձինք իրենց օգտին կայացված վարչական ու դատական ակտերի կատարմանը սպասում են օրերով, երբեմն էլ՝ ամիսներով: Անշուշտ, նման վիճակը չի կարող գոհացուցիչ լինել ո՛չ պետության, և ո՛չ էլ իրենց վերաբերող որոշումների կատարմանը սպասող անձանց համար:

Վարչական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտությունը հաճախ ծագում է, երբ վարչական մարմինն ընդունում է վարչական ակտ, որով ակտի հասցեատիրոջ վրա պարտականություն է դրվում իրականացնել որոշակի գործողություններ՝ վճարում (օրինակ՝ հարկային ժամկետանց պարտավորության կատարում) աշխատանքների կատարում և այլն: Հարկային պարտավորությունների կատարմանը միտված վարչական ակտերի հարկադիր կատարումը կարգավորող իրավական նորմերը, միաժամանակ ուղղված են հարկային վարչարարական հարաբերություններում օրինականության ապահովմանը, բազմաթիվ անցանկալի հարկային իրավախախտումների և դրանց արդյունքում անթույլատրելի հետևանքների կանխմանը և տեղական հարկերի մասով՝ ՏԻՄ-երի ակտերի կայունության ամրապնդմանը:

Հարկադիր կատարման վարույթում վարչական ակտն ի կատար է ածվում կոնկրետ հասցեատերերի նկատմամբ, ինչպես անհատական, այնպես էլ հավաքական: Օրենքով սահմանվում են այն մարմինները, որոնք իրականացնում են վարչական ակտերի կատարումը և որոնք սահմանված կարգով կարող են կիրառել հարկադրանքի միջոցներ՝ այն ապահովելու համար: Իշխանության իրականացման եղանակ է համարվում նաև հարկադրանքը: Առանձին դեպքերում վարքագծի մի քանի տարբերակների առկայության պարագայում կամքի միասնականության կարելի է հասնել միայն համարժեք և միաժամանակ տարաբնույթ նախապայմաններ ստեղծելու միջոցով:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին, առաջնորդվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով, մասնավորապես՝ հարկ է նկատել, որ այդ հոդվածի 1-ին

մասը սահմանում է, որ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով: Իսկ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա է անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին ընդունել ի ղեկավարումն հետևյալը. «Չվճարված գումարը գանձելու վերաբերյալ» որոշումը հարկադիր կատարման ուղարկելու հարաբերություններում՝

- Այս որոշումները պարտադիր ներկայացվում են հարկադիր կատարման՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ 3-ամսյա ժամկետում:
- Վարչական ակտերի բողոքարկման ժամկետները՝ վարչական ակտը ենթակա է բողոքարկման այն ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում: Զբողոքարկվելու դեպքում այն դառնում է անբողոքարկելի:
- Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում հարուցվում է կատարողական վարույթ:
- Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդունել ի գիտություն, որ պարտավոր անձը, վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից 2-ամսյա ժամկետում, ունի նաև իրավունք անբողոքարկելի դարձած վարչական ակտը ՀՀ վարչական դատարանում բողոքարկելու, որի ժամկետը հաշվարկվում է՝ վարչական ակտը վարչական կարգով բողոքարկելու դեպքում բողոքի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո, վարչական ակտը չբողոքարկելու դեպքում բողոքի համար սահմանված ժամկետն ավարտելուց հետո:

Բողոքարկման ժամկետը կարող է վերականգնվել հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում: Միաժամանակ վարույթի մասնակիցը կարող է բողոք ներկայացնել բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը վերացնելուց հետո 15 օրվա ընթացքում: Այսինքն՝ բողոքարկման ժամկետները բաց թողնելու հիմքով անբողոքարկելի դարձած վարչական ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը վերացնելուց հետո 15 օրվա ընթացքում, եթե բողոքարկման ժամկետը բաց է թողնվել հարգելի պատճառով (բողոք բերողից անկախ պատճառներով) կամ եթե բողոքարկման ժամկետի բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ:

Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

1. տեղական հարկերի հավաքագրման արդյունքում առաջացած պարտավորությունների գանձումը համայնքի ղեկավարի կողմից հանդիսանում է վերջինիս սեփական լիազորությունը և օրենսդրությամբ սահմանված 2-ամսյա ժամկետում «Չվճարված գումարը գանձելու վերաբերյալ» որոշումը հարկադիր կատարման չուղարկելը կարող է դիտվել համայնքի ղեկավարի կողմից որպես անգործություն:
2. Տեղական հարկերի վճարման գծով հայտնաբերված խախտումների և առաջացած հարկային պարտավորությունների նկատմամբ գործում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված վաղեմության ժամկետը՝ 10 տարի:

Հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման ՎԴՕ-ով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

ՎԴՕ-ի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով (օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետ):

Եթե վարչական մարմնի իրականացրած վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը վարչական վարույթ իրականացնող մարմինն իրավասու է գումարի գանձման վերաբերյալ որոշումը կայացնելուց ոչ շուտ, քան 10 օր հետո ընդունելու պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշում:

Արգելանք դնելու մասին որոշումը սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է կատարման Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, բացառությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանք դնելու մասին որոշման: Արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի պարտավորությանը համարժեք գույքի վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

Պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն է ներկայացվում սահմանված կարգով՝ կցելով որոշման ընդունման համար հիմք հանդիսացած ապացույցները: Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

Դրամական պահանջները սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը, այդ ակտի մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ինչպես նաև ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն, որում նշվում են՝

1) դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացրած վարչական մարմնի անվանումը.

2) դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը.

3) վարչական ակտի համարը, որի հիման վրա դրամական պահանջը ներկայացվել է կատարման, և գանձման ենթակա գումարի չափը.

4) վարչական ակտն ընդունելու տարին, ամիսը և ամսաթիվը.

5) վարչական ակտն անբողոքարկելի դառնալու տարին, ամիսը և ամսաթիվը.

6) պարտավոր անձի անունը, հայրանունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը,

իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը.

7) վարչական մարմնի գանձապետական հաշվեհամարը: Եթե վարչական մարմինը մինչև դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելը հետաձգել կամ տարաժամկետել է վարչական ակտի կատարումը, ապա գրության մեջ նշվում է դրա կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտը:

Գրությունը ստորագրում և կնիքով (առկայության դեպքում) հաստատում է համայնքի ղեկավարը: Դրամական պահանջներով նախատեսվող գումարների վճարման համար պարտականությունը կրում է այն անձը, ով պարտավոր է այդ գումարը վճարել՝

ա) իր համար կամ իր կողմից թույլ տրված խախտումների համար.

բ) մեկ այլ անձի փոխարեն:

Հարկ է նկատել, որ մինչև 2017 թվականը, ՀՀ վարչական դատարանին էր ենթակա հանրային իրավական դրամական պահանջներով վճարման կարգադրություններ արձակելու առարկայական ընդդատությունը՝ անկախ գումարի բռնագանձման չափից, որն ազդում էր դատարանների ծանրաբեռնվածության վրա: Սակայն 2017 թվականին կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում (<O205-Ն) ՎԴՕ-ը լրացվեց «Անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 29.1 գլխով:

Այսպես, ՎԴՕ-ի 16.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (բռնագանձման վերաբերյալ գործեր) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 31.1 հոդվածի համաձայն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջներին չհամապատասխանող, ինչպես նաև ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը երկու հարյուր հազար դրամը գերազանցելու, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 2.1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու դեպքերում ներկայացված փաստաթղթերը հարկադիր կատարողը վերադարձնում է վարչական մարմին: Հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե դատական կարգով վիճարկվում է հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտը: Հարկային դրամական պահանջներով

բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել՝

1) եռամսյա ժամկետում՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու պահից.

2) երկամսյա ժամկետում՝ հարկադիր կատարողի կողմից հանրային իրավական դրամական պահանջով կատարողական վարույթն ավարտվելու պահից:

ՎԴՕ-ի 216.1-ին հոդվածի երրորդ մասում սահմանված է, որ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշմամբ վերանում է սվյալ վարչական ակտի անբողոքարկելի լինելը:

Վերը նկարագրված անհրաժեշտ է ընդունել ի ղեկավարումն հետևյալը. տեղական հարկերի ժամկետանց պարտավորությունների մասով, համայնքի ղեկավարի կողմից կայացված վարչական ակտը, եթե 2 ամսվա ընթացքում չի բողոքարկվում այդ ակտի հասցեատիրոջ կողմից, ապա այն օրենքի ուժով համարվում է անբողոքարկելի վարչական ակտ: Հանրային դրամական պահանջ ենթադրող անբողոքարկելի վարչական ակտի հիմքով, համայնքի ղեկավարը լիազորված է օրենքով, իր անունից պաշտոնական գրություն ուղարկել արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության տարածքային ստորաբաժանման ղեկավարին, որպեսզի վերջինս հարուցի կատարողական վարույթ:

ԴԱՀԿ ծառայության տարածքային ստորաբաժանման կողմից հարուցված կատարողական վարույթի շրջանակում, հասցեատեր համարվող անձի գույքի և դրամական միջոցների վրա դրվում է արգելանք: Գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դրվելուց հետո, ԴԱՀԿ ծառայության տարածքային ստորաբաժանման և վարչական ակտի հասցեատիրոջ միջև վարչարարությունը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ հասցեատեր սուբյեկտը չի ապահովել վարչական ակտով սահմանված չափաբաժնով ժամկետանց պարտավորությունների մարումը և չի վճարել ԴԱՀԿ վարույթի համար նախատեսված պետական վճարը:

Առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն հետևյալը.

- Անշարժ գույքի հարկի մասով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում համայնքի ղեկավարը կայացնում է որոշում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում է հարկ վճարողին:
- Որոշումը ուժի մեջ է մտնում՝ որոշման մասին պատշաճ իրազեկելու հաջորդ օրվանից, եթե այդ ակտով այլ բան սահմանված չէ:

Համայնքի աշխատակազմը պարտավոր է այդ որոշման վերաբերյալ պատշաճ ծանուցում իրականացնի, մասնավորապես ստորև նկարագրված ընթացակարգով.

- Համայնքի ղեկավարի որոշումն ընդունելուց հետո, համայնքի աշխատակազմը պատշաճ ծանուցում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 3-օրյա ժամկետում: Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով: Ծանուցման այլ ձևերը կիրառվում են, եթե հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա /պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, օրենսդրությամբ սահմանված այլ ձևով/, այդ թվում նաև, եթե հասցեատերն ինքն խնդրել է օգտագործել հանձման այլ միջոցներ:
- Համայնքի աշխատակազմը, գրավոր վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելիս պարտավոր է դրա հետ միասին հանձնել նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը:
- Նշված փաստաթղթերը վարչական ակտի հետ միաժամանակ չհանձնելը կամ ուշ հանձնելը չի կարող ազդել վարչական ակտի գործողության վրա և այդ պատճառով ակտի իրավաչափությունը վիճարկելու հիմք դառնալ: Էլեկտրոնային կարգով վճարման գումարների վերաբերյալ ծանուցում նախատեսված չէ: («Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդված):

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին և համայնքների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին, ընդունել ի գիտություն հետևյալը. ՏԻՄ-ի կողմից հարկային վարչարարության տեսանկյունից անգործություն ցուցաբերվելու պարագայում, գործում են ՎԻՎ. օր.-ով նախատեսված պատասխանատվության միջոցներ ենթադրող կարգավորումները, ընդհուպ՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված սանկցիաները:



#### 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ<sup>6</sup>

ՀԱՎԵԼՎԱԾ N1

Օրինակելի Ձև

/Անուն, հայրանուն, ազգանուն/-----/

(Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի տվյալները և մարմնի ղեկավարի անուն, ազգանուն, հայրանունը)

/հասցե//ք. -----/

#### Ծանուցագիր

----- մարզի ----- /համայնքապետարանի/ աշխատակազմի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ ----- համայնքի բյուջեի հանդեպ Ձեր կողմից հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում գոյացած անշարժ գույքի հարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

Հարուցված վարչական վարույթի լուծմանը տեղի են ունենալու **20..թ. ----- ին, ժամը՝ 00:00-ին**, որին մասնակցելու նպատակով Դուք, որպես վարչական վարույթի մասնակից, հրավիրվում եք ներկայանալ ----- /համայնքապետարանի/ աշխատակազմի ----- բաժին, հասցե՝ ք. , փ-----,2----- --րդ հարկ, -- սենյակ:

Նախազգուշացնում ենք, որ վարչական վարույթի մասնակիցները վարույթի լուծմանը պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով /անձնագիր և վարույթին վերաբերվող նյութերի պատճեններով/, իսկ լիազորված անձինք՝ լիազորագրով: Լիազորագրի համար նոտարական վավերացում չի պահանջվում:

Տեղեկացնում ենք նաև, որ պատշաճ կարգով ծանուցված վարչական վարույթի մասնակցի կողմից վարույթի լուծմանը չներկայանալն արգելք չէ լուծմանը իրականացնելու և վարչական վարույթը համապատասխան վարչական ակտի կայացմամբ եզրափակելու համար:

Կից ներկայացվում է տեղեկանք՝ չկատարված հարկային պարտավորության չափի և վճարման հաշվեհամարի նշումով՝ 000000000000, **թիվ 1 ՏԳԲ** :

----- /անուն, ազգանուն/

Աշխատակազմի ----- բաժին

Կատարող՝ -----

Հեռ. -----

<sup>6</sup> **ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Սույն բաժնում ներկայացված օրինակելի ձևերը համապատասխանաբար կիրառելի են անշարժ գույքի հարկով (հողի և շենք-շինությունների) հարկման ենթակա բոլոր օբեկտների հետ կապված հարաբերություններում:

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Վարչական վարույթի լուսնների մասին

**00.00.20..թ.**

**ք(գ.)**-----,

----- համայնքապետարանի աշխատակազմի -----  
բաժնում /վարչական շենքի, թիվ 000 սենյակում/, մասնակցությամբ ----- բաժնի պետ  
----- /անուն, ազգանուն/, ----- բաժնի պետ -----  
/անուն, ազգանուն/, ----- բաժնի ----- մասնագետ -----՝ /անուն,  
ազգանուն/, քննության է առնվում անշարժ գույքի հարկի գծով հարկային  
պարտավորությունների վերաբերյալ 00.00.20..թ. տեղեկանքի հիման վրա 00.00.20..թ.  
հարուցված վարույթը:

Վարչական վարույթին ներկայացել է /չի ներկայացել/ ----- /հարկատուի  
անուն, հայրանուն, ազգանուն/: (Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի  
անվանումը և գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն, հայրանունը)

Քննարկվում է **ք(գ.)** ----- հասցեում գտնվող ----- /գույքի/  
վերաբերյալ անշարժ գույքի հարկի գծով ----- ՀՀ դրամ հարկային  
պարտավորությունների վերաբերյալ հարցը:

Վարչական վարույթի մասնակիցներին պարզաբանվեց «Վարչարարության  
հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված  
բացարկ հայտնելու հիմքերը և կարգը, իրենց իրավունքները և պարտականությունները:  
Բացարկ չհայտնվեց և միջնորդություններ չներկայացվեցին:

Վարչական վարույթի մասնակիցներին հնարավորություն տրվեց արտահայտվելու  
վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքերի վերաբերյալ:

Վարույթի մասնակից ----- /հարկատուի անուն, հայրանուն, ազգանուն/  
հայտարարեց, որ ----- /Օրինակ՝ կատարել է մասնակի վճարում,  
ներկայացրեց վճարման անդորրագրերը և 00.00.20...թ. տեղեկանք տրված եկամուտներ  
հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից և խնդրեց տույժերը հանել/: Նրան  
պարզաբանվեց, որ տույժերը զիջման վերաբերյալ այս պահին գործող օրենսդրական  
կարգավորում չկա սահմանված:

Վարչական վարույթի լուսնը ավարտվեց **ժամը՝ 00:00-ին**: Կողմերին պարզաբանվեց,  
որ գումարի գանձման վերաբերյալ որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով կուղարկի  
վարույթի մասնակիցներին:

**Վարչական վարույթի**

**մասնակիցներ՝** ----- /ստորագրություն, անուն, ազգանուն/

ՀՀ -----մարզի -----համայնքի ղեկավարի

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«00» -----ի 202--թ.

N----- -Ա

ՀՀ -----մարզի-----համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի ----- /անուն, հայրանուն, ազգանուն/, (Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը և գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն, հայրանունը) հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 202-- թվականի -----ի --ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով ----- /համայնքապետարանի/ աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն ----- բաժնի կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անշարժ գույքի հարկով հարկվող օբյեկտ համարվող Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված շենքերի և շինությունների (հողերի կամ հողամասերի) հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող անշարժ գույքը՝ **ք.(գ.)** -----, -----, **գույքը** հանդիսանում է քաղաքացի ----- /անուն, հայրանուն, ազգանուն/ (Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը) սեփականությունը, ինչը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա անշարժ գույքի հարկը կազմում է ----- ՀՀ դրամ, ինչը **20--20-- թթ.** ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի -----՝ /անուն, հայրանուն, ազգանուն/ (Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը), նշված ժամանակահատվածի համար անշարժ գույքի հարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ ----- ՀՀ դրամի չափով:

**20--- թվականի -----ի -ին** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում **20--- թվականի -----ի -ին** հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ **01.01.20---** փոստ. անդորրագիր /քաղաքացի ----- **ը** /անուն, հայրանուն, ազգանուն//, (Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը և գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն, հայրանունը): Վերջինս ներկայացել է վարչական վարույթ լուսմներին (կամ չի ներկայացել):

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար հարկային օրենսգրքի 11-րդ բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Նույն օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի կիրառության իմաստով, հողամասերը՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության, սահմանվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ, իսկ հողամասերի բարելավումներ են համարվում հողամասերում կառուցված հետևյալ ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները: Անշարժ գույքի հարկը վճարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված

(պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է անշարժ գույքի հարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ և 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի ----- /անուն, հայրանուն, ազգանուն/ (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը), հոգուտ ----- համայնքի բյուջե գանձել ----- ՀՀ դրամ, որպես **ք.(գ.)**-----, -----, ----- **գույքի** համար վճարման ենթակա անշարժ գույքի հարկի գումար, որից ----- ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել -----ի համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից **երկու /մինչև 20-----թ-----1-ը/** ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է ----- համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կնիք, ստորագրություն /անուն, ազգանուն/

Համապատասխան

պաշտոնատար անձինք՝

ստորագրություն /անուն, ազգանուն/

/վարչ. վարույթը իրականացրած/

ՀՀ -----մարզի -----համայնքի ղեկավարի

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«00» -----ի 202--թ.

N----- -Ա

**----- համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Քաղաքացի -----/անուն, հայրանուն, ազգանուն/ (Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը), հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 20---- թվականի -----ի 00-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով ----- համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա Կադաստրի կոմիտեի կողմից տրված ելակետային տվյալների ք. (գ.) ----- , ----- 0 նրբ. 00/0 հասցեի 0.0000 քմ. մակերեսով հողամասը հանդիսանում է քաղաքացի ----- /անուն, հայրանուն, ազգանուն/ (Իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը) սեփականությունը, ինչը, ՀՀ հարկային օրենսգրքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա անշարժ գույքի հարկը կազմում է 0.000 ՀՀ դրամ, ինչը 20---- 20----թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

**20--- թվականի -----ի 00-ին** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում **20--- թվականի -----ի 00-ին** իրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով չի ներկայացել ----- /անուն, հայրանուն, ազգանուն/, չնայած պատշաճ ծանուցվել էր /հիմք 00.0.20----թ. փոստ անդորագիր/:

Համաձայն համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 00.00.20---թ. տրված տեղեկանքի -----/անուն,հայրանուն,ազգանուն/ ք.-  
-----, ----- 0 նրբ. 00/0 հասցեի համար կատարել է 0000 ՀՀ դրամի վճարում /20..-  
20---թթ/:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ ենթակետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնենով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

#### ՈՐՈՇԵՑԻ

Քաղաքացի -----/անուն,հայրանուն,ազգանուն / (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը) վերաբերյալ 00.00.20---թ. հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից **երկու /մինչև 20---թ---1-ը/** ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է ---  
----- համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ -----կնիք, ստորագրություն /անուն, ազգանուն/